ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսթի 1

№ 1295-Ա « 10 » ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ,Ն.ՇԵՆԳԱՎԻԹ 15-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.1 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՍՈՆ ԵՐԱՄԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Սամսոն Երամի Աղաջանյանի (ծնված 02.02.1962թ.) դիմումները (12.10.2022թ. հ.Դ-89584-22, 22.04.2023թ. հ.Դ-47675-23, 24.07.2023թ. Դ-89570-23, 14.12.2023թ. հ.Դ-157170-23, 14.12.2023թ. հ.Դ-157170-23, 04.03.2024թ. Դ-29937-24): Երևանի Շենգավիթ վարչական շրջան, Ն.Շենգավիթ 15-րդ փողոց հ.1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 97.64քմ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 24.11.2022թ. հ.ԱՏ-24112022-01-0919, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 07.09.2023թ. հ.12390 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 16.01.2025թ. հ.20-Ել-Դ-89584-22 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Ն.Շենգավիթ 15-րդ փողոց հ.1 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով.

1.Վերականգնել ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Ն.Շենգավիթ 15-րդ փողոց հ.1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սամսոն Երամի Աղաջանյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 97.64քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 97.64քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ Երևան, Շենգավիթ վարչական

շրջան, Ն.Շենգավիթ 15-րդ փողոց հ.1 հասցեում գտնվող 97.64քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ